ԱՐՄԱՏԱԿԱՆ ՍԵՐ

Կյանք Հիմնված Աստծո Սիրո Վրա
Մաս 4

«Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերումը. և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինիք:» Եփեսացիս 3:17

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհքը
որ իր միածին Որդին տվավ.
որ ամեն նրան հավատացողը չկորչի,
այլ հավիտենական կյանքն ունենա:» Հովհաննես 3:16

1. Մեծագույն սերը

«Որովհետև Աստված այնպես <u>սիրեց</u> աշխարհքը...»

«Ընտրեց մեզ նրանով աշխարհքի ստեղծելուցն առաջ.» Եփեսացիս 1:4

«Բարի է Տերը <u>ամենի</u> համար.և նրա ողորմությունը իր բոլոր գործերի վրա է:» Սաղմոս 145:9

«<u>Ոչ մեկ</u>...ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սերիցը՝ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսումն է:» Հռովմայեցիս 8:39

«Որ...իմանաք, թե ինչ է լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը. Որ ճանաչեք Քրիստոսի սերը որ ամեն գիտությունից գերազանց է. որ Աստծո ամեն լիությունովը լցվեք:» Եփեսացիս 3:18-19

2. Մեծագույն զոհաբերությունը

«որ իր միածին Որդին <u>տվավ</u>...»

«Քրիստոսը աներևույթ Աստծո պատկերն է.» Կողոսացիս 1:15

Հիսուս:«Ինձ տեսնողը Հորը տեսավ.» Հովհաննես 14:9

«<u>Աստված հայտնեց իր սերը</u> դեպի մեզ, որ՝ երբոր մենք դեռ մեղավոր էինք՝ Քրիստոսը մեզ համար մեռավ:»
Հռովմայեցիս 5:8

«Նա քավություն է մեր մեղքերի համար. և ոչ միայն մերիններիբայց բոլոր աշխարհքի էլ:» Ա Հովհաննես 2:2
«Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արավ. որ մենք Աստծո արդարությունը լինենք նրանում:»
Բ Կորնթացիս 5:21

3. Մեծագույն հրավեր

«որ <u>ամեն նրան հավատացողը</u> չկորչի...»

«Աստծո շնորհքը երևեցավ. որ փրկարար է, <u>ամեն մարդկանց</u> համար:» Տիտոս 2:11

«<u>Ամեն ազգում</u>, ով որ վախենում է նրանից՝ և արդարություն է գործում, ընդունելի է նրան:» Գործք Առաքելոց 10:35

«Եթե բերանովդ Հիսուսին Տեր <u>դավանես</u>, և սրտումդ <u>հավատաս</u> թե Աստված հարություն տվավ նրան մեռելներից, կապրես:» Հռովմայեցիս 10:9

«Ես չեկա որ աշխարհքը դատեմ, այլ որ փրկեմ աշխարհքը:» Հովհաննես 12:47

4. Մեծագույն նվերը

«այլ <u>հավիտենական կյանքն</u> ունենա.»

«Մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը, Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելովը, դեպի այն անեղծ և անարատ և անթառամ ժառանգությունը, որ երկնքումը պահված է ձեզ համար:» Ա Պետրոս 1:3-4

«Մեզ առաջուց սահմանելով, որ իրան որդեգիր լինենք Հիսուս Քրիստոսի ձեռովն՝ իր կամքի հաճության պես.» Եփեսացիս 1:5

«Աստված ասում է. ահա <u>հիմա</u> է ընդունելի ժամանակ. ահա <u>հիմա</u> է փրկության օր:» Բ Կորնթացիս 6:2

Հաջորդ Կիրակի

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀՈՒՅՍ

Հովիվ Սարօ Խաչիկեան